ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	կոստյումներ	կոստյումներ	կոստյումներ	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Մուգ փիրուզագույն կտորից առնվազն 67% բուրդ, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ2 314 գ, աստառը մուգ փիրուզագույն ««POLICE»» գրառումով և ՀՀ Ոստիկանության զինանշանի պատկերով, քաշը առնվազն 70գ՝ 1մ2: Արտադրվում է 46 մինչև 62 չափսի: Բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձվող կտորով, իսկ կրծքամասում սոսնձվող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին

					դետալները /գրպանների կափույրներ, օձիք/ նույնպես կրկնակարվում են սոսնձվող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Կիտելի լանջափեշերը կոճկվում են 4 հատ միաշարք՝ ՀՀ Ոստիկանության զինանշանով 22 մմ արծաթագույն, անփայլ մակերեսով ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Օձիքը հետծալված, որի եզրերը կանտապատվում են կարմիր գույնի 2481/2581 ԻԱ արտիկուլի մահուդե կտորով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Օձիքի վրա կարվում է երկու դափնեճյուղերով մետաղական խորհրդանշաններ, դափնեճյուղերի կենտրոնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, որը պետք է լինի ասեղնագործված և կարմիր եզրակարով մշակված: Տարազաբաճկոնի 2 փեշերի ներքևի մասերում՝ ձևավոր կափույրով ներկարված գրպաններ: Կրծքամասի 2 կողմում տեղադրված

					են վրադիր գրպաններ, որոնց կափույրները կոճկվում են ՀՀ Ոստիկանության զինանշանով 14 մմ արծաթագույն, անփայլ մակերեսով ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Ձախ գրպանի մեջտեղում կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Հետևամասում բացվածք, ձախ կողմում ունի ծոցագրպան: Թևքերը 2 կտորից, որոնք թեզանիքի մասում միացվում են կարմիր եզրաքուղով: Աջ թևքի թեզանիքի վերևի մասում կարվում է Հայաստանի Հանրապետության եռագույնի տեսքով ժապավեն, որի եզրերը եզրակարված են կարմիր գույնի թելերով: Տաբատը – Մուգ փիրուզագույն կտորից /արտ. 2311/ առնվազն 67% բուրդ, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ2 314 գ.: Աստառը մուգ փիրուզագույն ««POLICE»» գրառումով և ՀՀ Ոստիկանության զինանշանի պատկերով, քաշը առնվազն 70գր մ2: Ուղիղ ուրվագծով, կողային կարերում անցկացվում է 1.5-2մմ լայնության կարմիր գույնի

					2481/2581 ԻԱ արտիկուլի մահուդից երիզներ: Գոտին՝ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, տեղադրված եզրաքուղից առաջ: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան:Առաջամասում մինչև ծնկները մշակվում է աստառ: Կիտելի վերևից 2-րդ կոճակի վրա պետք է կախած լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն կոստյումի չափսերին, որպեսզի

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԷԱՃԱՊՁԲ-2022-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3					

կոստյումը չճմրթվի: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատորիական ստուգման եզրակացությունը: Նմուշը և չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: